ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/91

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՄԴԳՀԱՊՁԲ20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4761-2020 գրությամբ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.02.2020թ.-ի թիվ 39/02-15-60 գրության հիման վրա, 30.03.2020թ.-ին «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 30.03.2020թ.-ին: 31.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/91 համարի ծածկագիրը:

15.04.2020թ.-ին ու 29.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 15.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2020թ.-ին:

2. «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ն 18.02.2020թ.-ի թիվ 39/02-15-60 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Վայոց ձոր մարզի Գետափի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կողմից 2020թ. հունվարի 22-ին գնումների պաշտոնական կայքում հրապարակվել է Գետափի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կարիքների համար ԳՄԴԳՀԱՊՁԲ-20/01 ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ հայտարարությունը: Համաձայն վերը նշված հայտարարության ԱՁ Ռուզաննա Զաքարյանը թիվ 1 չափաբաժնով ճանաչվել է ընտրված մասնակից: 2020թ. հունվարի 30-ին Գետափի միջնակարգ դպրոցի կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ծանուցագիր, ինչպես նաև թիվ 1 չափաբաժնով կնքվելիք պայմանագրի նախագիծը: Սակայն ԱՁ Ռուզաննա Զաքարյանը հրաժարվել է ստորագրել պայմանագիրը: Ղեկավարվելով ԳՄԴԳՀԱՊՁԲ20/01 ծածկագրով հրավերի 8:13 կետով Ձեզ ենք ներկայացնում ԱՁ Ռուզաննա Զաքարյանի տվյալները, գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ իրականացնելու համար:»:

3. <u>«Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4761-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 08.01.2020թ.-ին հայտարարվել է «ԳՄԴԳՀԱՊՁԲ20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից 22.01.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության

ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4761-2020 գրությամբ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին

ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 08.01.2020թ.-ին հայտարարված «ԳՄԴԳՀԱՊՁԲ20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից 22.01.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ կայքում Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել արձանագրություն, հայտարարություն՝ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի հետ պայմանագիր չկնքվելու վերաբերյալ:

Սույն գործում առկա փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պատվիրատուի կողմից Մասնակցին չի ներկայացվել պայմանագիր կնքելու մասին ծանուցում և պայմանագրի նախագիծ, ինչպես նաև՝ չի ներկայացվել Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ հաստատված

համարել Մասնակցի կողմից Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների խախտումը, արձանագրել վերջինիս կողմից պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկվելու փաստը և սույն ընթացակարգի քննության արդյունքներով կայացնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին պատճառաբանված և հիմնավոր որոշում:

Վերոգրյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի դրույթները, համաձայն որոնց՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Գործում առկա «ծանուցում1» վերնագրված՝ համակարգչից արտատպված փաստաթուղթը անստորագիր է, անթվագիր է և վերջինիս բովանդակությունը պարունակում է զուտ տեղեկատվություն՝ ընտրված մասնակից ճանաչվելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի դրույթներին համապատասխան հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ընտրված մասնակցին է տրամադրել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 32-րդ կետի 12-րդ եբթակետի դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի

կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4761-2020 գրությամբ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/91 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**